

ՎՐԼԱՅ , և երբեմն մինչև կէս գիշեր խորհածա-
նութիւնը կրնայ շարունակուիլ :

Հայկական Հարսանիքը կրնայ բիւր մանր
եղանակաւորութիւններ կրել, սակայն անոր էա-
կան գծերը, գերազանցօրէն գեղեցիկ, պէտք է
պահպանուին յաւիտեան :

Մեր ցեղին ամենաթանկ ժառանգութիւն-
ներէն մէկն է Հայկական Հարսանիքը . ճանշ-
նա՛նք անոր արժէքը և միշտ ընենք մեր Հար-
սանիքները Հայկական :

Նիւ-Ծօր

Տօբ. Մ. Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ԷԶՄԻԱՄԵՆԱՅ բազմահմուտ միաբան և իմ սի-
բիւի բարեկամ Հ. Գրեգորի վարդապետ Յովսէփեանի
գրած այս տրեւմանը, զոր՝ իր մէկ փորձիկ յօ-
դուածին հետ կը հրատարակեն ստորև, էջմիածնամ
մէջ այժմ մնացած նկարներուն թուականը դէթ մա-
սամբ շնչելու կը նպաստէ . ասիկա իմ ձեռքս հասաւ
երբ արդէն "Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնա-
թան Յովնաթանեան նկարիչը" զբոյս տալաւորութիւնը
վերջացած էր, որով չկրցայ օգուտիլ :

Յովնաթանի գործին վրայ ուսումնասիրութեանս
մէջ՝ ես այն կարծիքն յայտնած էի թէ ինչ որ
ազգահաւաք Յովնաթանի (և իր աշակերտներուն)
գործն է, որմնազարդերն են ու որմնակարները, և
աւագ սեղանի մարմարէ ճակտին վրայ նկարուած
Աստուածածնայ և սրբոց նկարները : Իսկ իւզաներկ
նկարները, ուր ոճի ու ձեռքի մեծ տարբերութիւն-
ներ կը զգացուին, և որոնք անշուշտ միևնոյն անձի
և միևնոյն շրջանի գործեր չեն, շնչել թէ որո՛նք
են անոնց մէջ Յովնաթանին պատկանողները, զըժ-
ուար գտած էի. հաւանական համարած էի որ իտա-
լական ոճի ազդեցութիւն ցոյց տուող նկարները
անորը չըլլան, այլ թերեւս՝ Ստեփաննոս վարդապետ
Լեհացոյն . Թագակիր Ս. Աստուածածինը, Ընթրիքը,
Ս. Հովսէփիմէն, Ս. Թաղէսը, Ս. Բարթոլոմէոսը և
նմանօրինակ մէկ քանի նկարները, որոնք քիչ մը
հին ձեռագրի մանրանկարներ կը յիշեցնեն՝ եւրոպա-
կան ազդեցութեամբ խառն, տուելի հնարաւոր նկա-
տած էի Յովնաթանին վերագրուելու : Այժմ, այս

տրեւմանը կուգայ որոշապէս ապացուցանել թէ իմ
հատորիս մէջ վերաբարուած նկարներէն ոճանց
չեն կրնար Յովնաթանին վերագրուիլ, քանի որ
արդէն գոյութիւն ունէին Սիմէոն կաթողիկոսին
օրով . ասոնցմէ են՝ Աւետարեք հրեշտակը և Աւետ-
ընկալ Ս. Մարիամը, Ս. Հովսէփիմէն, Ս. Ընթրիքը,
Թագակիր Ս. Աստուածածինը (Ս. Կարապետ և Ս.
Յովսէփ երկու քովը), տասներկու աւաքեալները
(որոնցմէ չորսին լուսանկարը հրատարակած էի)
Մկրտութիւնը, Յարութիւնը :

Նկարիչ Յովնաթանին գործին քանի մը նմուշ
հրատարակելով հատորիս մէջ և իրեն նուիրելով
հակիրճ ուսումնասիրութիւն մը՝ իմ նպատակս եղած
էր՝ ինչպէս գրած էի՝ ուշագորութիւն հրաւիրել մեր
մեծ սրբավայրերուն մէջ գտնուած գեղարուեստական
աւարկանքներուն ու ծանաւորապէս նկարներուն վը-
րայ, ու նոյն ասեւն փափաք յայտնած էի որ մաս-
նագէտներ ասիլի՝ ծօտանց և ասիլի մանրակրկիտ
կերպով քննեն էջմիածնայ մէջ գտնուած նկար-
ները, ասոնց մէջ Յովնաթանին իսկական բաժինը
հաստատապէս որոշեն, զանէն միւսներուն ալ ժա-
մանակն ու հեղինակները : Այս տրեւմանը արդէն
կարեւոր քայլ մը առնել կուտայ մեզ այս ճամբուն
մէջ : Ուրախ եմ որ Հ. Գրեգորի մտադիր է շարու-
նակել իր իւզագրութիւնները, քննութեան ենթար-
կել բոլոր նկարները և ամբողջական մանրազնին
ուսումնասիրութիւն մը պատրաստել : « Անահիտ » ի
ընթերցողները անշուշտ մեծ հետաքրքրութեամբ
պիտի սպասեն այդ ուսումնասիրութեան :

Ա. Զ.

Ս. ԷԶՄԻԱՄԵՆԻ ՏԱՃԱՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՈՒԹԻՒՆԸ ՍԽԷՄՈՆ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ



ՄԱՐ ՄԱՐՈՒ Արքեպ. ամառգրի 1901
թիւ Մարտ և Մայիս ու Յունիս
միացեալ Համարներում՝ հրատարակեցինք Հայ-
րապետական Գաւազանագրքի մի ընդարձակ
Հատուած, որ վերաբերում էր Մայր Տաճարի՝
Ղուկաս կաթողիկոսի ժամանակ և Յովնաթան
նկարչի ձեռքով կատարուած՝ պատկերագրու-
թեան և զարդանկարչութեան : Հեղինակը, ակա-
նատես և գործին տեղեակ մի անձնաւորութիւն,

շատ թանկագին մանրամասնութիւններ էր տալիս իւր ժամանակի և յատկապէս Մ. Տաճարի ներքին զարդագորութեան և որմանկարչութեան պատմութեան մասին (1) : Տարաբաղդաբար այդ հաստատմը կիսատ էր և մինչեւ այսօր չէ յաջողուել գտնել նրա շարունակութիւնը :

Ներկայիւս հրատարակում ենք մի այլ հաստատ «Դաւթար» և հաշուագիր անօթից և սպասուց սրբոյ և Միածնադի թաճարիս՝ վերնագրով ցուցակից, որ Սիմէոն կաթողիկոսի հրամանով կազմել են նորա սպասաւոր Մկրտիչը, Նրեմիա գրագիրը և լուսարար Գրիգոր վարդապետը : Այդ «Դաւթարի» մէջ թուած են ոչ միայն Սիմէոն կաթողիկոսի ժամանակ եղած պատկերները, այլև տալիս են նրանց դասաւորութիւնն ու երբեմն համառօտ նկարագրութիւնը : Այդ պատկերներից մի քանիսը մնացել են մինչև այժմ րոյց տարաբաղդաբար հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի հրամանով սրանք և Յովնաթանի նկարածները անինայ պոկուեցան տաճարի պատերից և մի անկիւն նետուեցան : Դրանցից 65 նկարներ, ոմանք թէպէտ փաստած, դեռ կարելի է փրկել, եթէ չըջանակի մէջ դրուին և պահուին ապագայ պատկերասրահի համար, որպէս նիւթ հայ արուեստի վերջին շրջանի պատմութեան : Մի քանիսն էլ արգէն շրջանակի մէջ են դրուած և կախուած եկեղեցում : Այս ցուցակի համաձայն Սիմէոնի ժամանակի պատկերների թիւը 88 էր, իսկ Ղուկասի ժամանակ 120՝ վերոյիշեալ Գաւազանագրերի հատուածի համաձայն : Այդ 120-ից քանի՞սը Յովնաթանը նոր նկարեց և քանի՞սը նորոգեց, պահասում են պարզ ցուցումները . անորոշ է նշնայէս, թէ Սիմէոն կաթողիկոսի ժամանակից մնացած 88 պատկերները մանուսք են ամբողջապէս 120-ի մէջ :

Մեր հրատարակած այս ցուցակը երկու տեսակետով նշանակութիւն ունի Մայր Տաճարի ներքին պատմութեան համար . նախ գաղափար ենք ստանում, թէ ի՞նչ պատկերներ կային Սիմէոնի ժամանակ և որտեղ դասաւորուած, և երկրորդ միջոց է տալիս մեր ձեռքը հասած

պատկերներից որոշելու, թէ որո՞նք Յովնաթանի և որոնք նրանից առաջ եղած արուեստագէտների գործեր են : Բարեբաղդաբար հին պատկերներից ոմանք յիշատակի գրութիւններ ունին, որ աւելի դիրքացնում են վերապատմութեան գործը : Այդ վերապատմութիւնը կ'կատարենք և լուսանկարչական պատկերներով կ'լուսաբանենք մի այլ անգամ, երբ բոլոր պատկերները մաքրուած և շրջանակի մէջ դրուած կ'լինին :

ԳԱՐԵԳՈՍ ՎԱՐԴ. ՅԱՎԱԿԻՄԱՆ

Միաբան Մ. Արտոյ

ՊԱՏԿԵՐԷ ՄԵՅՔ, ՈՐԷ Ի ՅՈՐԴԱՆ ԿԱՍԻՆ .

Ի Դէ Դէ՛ իւրեմն՝ օտք Լսո՞ւնք իւրեմն .

1. Մի պատկեր Աստուածածնի, յորոյ վերին կողմն է երրորդութեան պատկեր :

2-3. Երկու պատկերք ևս՝ յորոց մինն է 1) աղօթել Տեառն՝ յուրբարձ գիշերին՝ և զորս նալն ի հրեշտակէն, և մինն է 2) իջուցանելն ի խաչէն : Են այսք յաղմէ և յահեկէ աւագ խորանին ի մէջ խաչկալին :

4-5. Երկու պատկերք՝ մեծին Ներսիսի 1) և Նիկողայոսի հայրապետացն 2), որք են իբրու դրուել ներքին դրանց մեծ խաչկալին :

6-7. Երկու պատկերք Աւետեաց՝ մինն 1) հրեշտակին և մինն 2) Ս. Աստուածածնին : Արք ևս են իբրու դրուել վերին դրանց մեծ խաչկալին :

Ի օտք Յովնայ իւրեմն՝ և օտք իւրեմն .

Ի վերջ Գաւ՝ իւրեմն .

8. Մի պատկեր ի մէջ սուրբ Յովնայ խորանին, որ է բերել հրեշտակին զգլուխ սրբոյն Յովնայ Աւագելոյն առ սուրբ Աստուածածնին և Աւագելոյն : Ի վերոյ ևս պատկեր երրորդութեան :

9. Մի պատկեր Աստուածածնի՝ որ է մեծ, զարեգակն արկեալ գիւրեւ՝ և զլուսինն ընդ ոտիւք, և ի վերայ պատկեր երրորդութեան, և շուրջ գիւրեւ՝ գուշակութիւնը մարգարեից՝ որք վասն իւր ասացեալ են, մանաւանդ այնք՝ որք ի գիրս երգ երգացին են, որպէս շուշան հովուաց՝

(1) Այս հասցումը գրեթէ ամբողջութեամբ աղտոտուած է « Նաղաւ Յովնաթան աւուրդ եւ Յովնաթան Յովնաթանան ճկարիչ » գրիս յաւաքաբանին մէջ :

ծաղիկ գաշտաց՝ և այլք, Նմանութիւնք նկարեալ են, և բանքն գրեալ ի ներքոյ իւրաքանչիւրոցն: Զոր սրբազան Սիմէոն կաթուղիկոսն ետ նկարել:

10. Մի պատկեր ևս վերափոխման սուրբ Աստուածածնին՝ յոյժ մեծ, և լուսինն ընդ օտիւք: Է այս Տնացեալ:

11. Մի պատկեր ևս, որ է Ս. Աստուածածնի, Միածինն մեռեալ ի գիրկն, և եօթն սուր ի սիրան:

12. Մի պատկեր ևս թաղման Տեսուն:

13. Մի պատկեր Մատթէոսի Աւետարանչին:

14. Մի պատկեր սրբոյ Կարապետին, որ է ի մէջ ճաճանշաւոր բոլորակի, և շուրջ զհւրե բոլորակք քաներկու, յորս են Ս. Կարապետի ծնունդն, ի յանապատ փախչիլն, անդ սնանիլն, և այլ որպիսութիւնքն մինչեւ ցմահն և թաղումն, և բերիլն Նշխարացն ի Հայս: Է այս յոյժ մեծագոյն:

Ի օտարք Լուսաւորչի Խորանն, և առ ընթեր

Երբք ի ներքին Գառնն Են այս:

15. Մի պատկեր ի մէջ Լուսաւորչի խորանին, որ է պատկեր տերունական բազմեալ յաթոռ քառակերպեան, և ի ներքոյ պատկերք Ս. Լուսաւորչին և Ս. Կարապետին:

16-18. Երեք պատկերք Ս. Լուսաւորչին՝ մինն մեծագոյն յոյժ, և երկուքն քան զայն փոքր, բայց մեծք: Ի մէջ երկուցն է բժշկելն զՏրդատ արքայն, իսկ ի միումն ինքն միայն է: Յերին ևս են չորեքստասան չարչարանքն ի մէջ բոլորակաց, շուրջ զհւրե:

19. Մի պատկեր Ս. Հռիփսիմեայ կուսին, խաչափայտն ի յուսն, և Տրդատ արքայն ընդ օտիւքն:

Ի օտարք Ստեփանոսի Խորանն Են այս:

20. Մի պատկեր ծննդեան՝ է ի մէջ խորանին Ս. Ստեփաննոսի:

21. Մի պատկեր ընթերաց Տեսուն:

22. Մի պատկեր Ս. Ստեփաննոսի՝ որ է փոքր, իւր քարկոծումն ևս առ ընթեր իւր:

Ի օտարք Յովնանի Խորանն Են այս:

23. Մի պատկեր Աստուածածնի ի մէջ Ս. Յօհաննիսի խորանին, Միածինն ի գիրկն և Ս. Կարապետն և Աստուածաշայրն Յովնէփ առ ընթեր իւր:

24. Մի պատկեր գլխատմանն Յակոբու Առաքելոյն, զորոյ զգուրն բերե Տրեշտակն առ Ս. Աստուածածնին, և առ Ս. Առաքեայն:

25-28. Չորս պատկերք՝ երկուքն Աւետեաց և երկուքն Տրդատայ և Կոստանդիանոսի թագաւորացն: Ի վերայ ճակատուց սեանց առաջի դասուն են այսք:

Ի յերբք Գառնն Են այս:

29-41. Երեքստասան պատկերք, որոց երկոստասանքն են Ս. Առաքելոցն, և մինն է թերահաւատութիւնն Թոմայի, և ցուցանելն Նմա Տեսուն զձեռս և զկող իւր: Կախեալք են սոքա ի վերին կողմն մեծի դրան տաճարին ի ներսին կուսէ:

42-53. Երկոստասան պատկերք ևս՝ որք կախեցեալք են ի վերոյ քան զվերոյգրեցեալ պատկերսն ի վերայ ռաւթին: Բոց մինն է ստեղծանելն Աստուծոյ զԱդամ, և առնուլն զեւայ ի կողէն, և խաբիլն Ադամայ, և եւանելն ի դրախտէն: Մինն է գալ ըջհեղեղին, և մոռնելն Նոյի ի տապանն: Մինն է զնուռն Իսահակայ՝ և փոխանակ նորա կախիլն խոյին ի ծառոյն Սաբակայ: Մինն է ելք ժողովրդեանն Խորայէի յԵրիկատոս: Մինն է բարձրացուցանելն Մովսէսի զօձն յանապատին: Մինն է ծնունդ Տեսուն, և շուրջ զնովաւ մարգարէք՝ տախտակք կտակարանաց ի ձեռս ունենալով: Մինն է փախուստ տեսուն յԵրիկատոս: Մինն որ մեծ է քան զսոսա՝ է յարութիւն Ղազարու, որ կախեցեալ է զերեսօք դրան վերին զանգակատանն: Մինն է զհւստ մարտեալ ոչխարին: Մինն է երեւիլ Տեսուն Աշակերտացն յետ յարութեան՝ ի ժամ որոյ ձկանցն, և նստիլն ի նաւն Պետրոսի, և արկանել տալն զուկանսն յաջակողմն նուին: Մինն է խարազանաւ չուանեայ Տանելն Տեսուն ի տաճարէն զվաճառօջս արհաւոց և ոչխարաց և այլ իրաց: Իսկ մինն է զուռն վերջին փողոյն, և Յարութիւն Տամբէն ննջեցելոց:

54-58. Հինգ պատկերք ի կողմն Հիւսիսային դրան տաճարին՝ կախեցեալք կան յորմոյն Յօրոց մինն է ըմբռնումն տեսուն, և կացուցանելն առաջի քահանայապետին: Մինն է՝ փարիսեցւոյ և մարաւորի աղօթելն ի տաճարին: Մինն է անկանիլն ի ձեռս աւագակաց առն այնմիկ՝ որ իրանէր յերուսաղէմէ յերիքով ըստ աւետարանական առակին, և վիրաւորիլն յաւագակացն, և

անհեղինակ և անզգուշ Սամարացւոյն : Մինն է մահ և ծանօթութիւն տալն ծնողացն սրբոյն Մէլքիսեանի : Եւ մինն է փրկիպոսի կաթուղիպոսն :

59-64. Այս պատկերը ևս ի կողմն հարաւային դրան տաճարին կախեալք կան յորմոյն : Ետրոք մինն է ըմբռնուած Տեառն : Մինն է տեւիկն Յակոբայ՝ որ ետես սանդուխտ հաստատեալ յերկրէ յերկինս : Մինն է մտանելն իմաստուն կուսանացն ի յառազատ փեսային , և յիմարացն մնայն արտաքոյ : Մինն է անկանիւն աղբատին զազարոսի ի դուռն մեծատանն , և լիզել շանցն զվերս նոցա , 7 և զեխիլ մեծատանն : Մինն է տնտեսին՝ որ զհաշիւս փոխատուաց տեառն իւրոյ խնդրէ , թէ քանի ի՞նչ պարտիս տեառն իմոյ : Իսկ մինն է մեծ քան զսոսա , որ է օրհնել Տեառն զաշկերտսն ի ժամ համբարձման , որ է ի մէջ խորանաձէ կերտածեոյ : Իսկ յաջմէ և յաջմէ կէ խորանաձէսին , եւ պատկերք սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պողոսի , որք են մեծք : Եւ առ ընթերի իւրեանց՝ զլիւիպոյր խաչին Պետրոսի , և զլիւտարին Պողոսի . և այս յիշատակ Բիւթիւր Պետրոս վարդապետին :

64-67. Քսաներեք պատկերք՝ շարեցեալք ի մէջ մեծի կաթուղիկին ի վերոյ , որք են բուր տնորենութիւնք Տեառն : Այսինքն՝ Աւետիքն : Ծնունդն : Քառասներորդ պաշտօնսն ի տաճարն : Կոտորումն մանկանցն Բեթղէհէմի : Մկրտութիւն : Այլաբերպութիւն : Ետրուցանելն զլազար : Գալն յերուսաղէմ յաւանակաւ : Ուտնալոյսն : Ընթերիքն : Աղօթելն և զօրանալն ի հրեշտակէն և ըմբռնիլն : Կապիլն ի սիւնն քարեայ և ձաղիլն : Պատկերն փշով և զգնեռն զքղամիդն : Բառնալն ի յուս զխաչն , և երթալն ի Գողգոթայ : Բեւեռնիլն ի խաչափայտին : Խնուցանելն ի խաչէն : Նստեալ մերկ ի վերայ գերեզմանին , և շուրջ դիւրեւ ամենայն գործիք շարաւարանացն : Աւերելն զգոթոսն և ազատելն զՏոգրանն : Ետրութիւն : Համբարձումն : Գալուստ հոգւոյն սրբոյ : Միւս անգամ գալուստն՝ և դատաստանն ահաւոր : Եւ վերափոխումն ամենօրհնեալ Ս. Կուսին Մարիամու :

68. Մի պատկեր ևս մեծ և խորանաձէ , որ եղեալ է ի գլուխ մեծի դրան սրբոյ տաճարին , յարտաքին կողմն , որ է իջումն Միածնին ի սուրբ տաճարս այս՝ և պատկերք հօր Աստուծոյ և Հոգւոյն սրբոյ՝ նաև սուրբ Լուսաւորչին՝ և խորհրդածու հրեշտակին , Տրդատայ , և քեռ

նորին և կնոջն , և այլոց բազմաց . և ձեք սրբոյ տաճարիս , և սրբոց վանօրէիցն Հռիփսիմեանց , Գայիանեանց , և Շողակաթին : Զոր սրբազան Աթոռն կաթուղիկուն ետ նկարել նորապէս , զի առաջինն հնացեալ և փտեալ էր :

Վերոգրեցեալ մէկ թուղթ և կէս պատկերացս գամն է՝ ութսուն և ութ . Ի ՌԻԻԻ Թուոյս , և ի յօգոստոսի ծ գրեցաւ :

ՓԻԼԻՍՈՓՈՒՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԳՐՈՒԹԻՒՆՏ

Ա. Կրնալք գտակաւ հոգեւտեսն՝ որ նախամարդը , իր անմեղութեան վիճակին մէջ , հոգի մեծ ու մեծո՛ւկ և անմահութեամբ չափ չգործէ անմահութեան մեծ աղբիւր-հոգիին , մարմին ապականացու անապականութեամբ չափ կցողդ անապական տիեզերքի համարողոր նիւթին՝ կարճազանգէր մեծ հոգին ու մեծ Բանն՝ անգիր ներշնչական գիտութեամբ գիտուն բարբառով մը . անմեղութեան արծի՛ւր տիեզերքի մեծ վանդակին՝ գրգալով և հաղորդարարաբար ճախրելով անոր տեսիլներուն և տեսարաններուն վրայ , այսինքն՝ միշտ գնայուն շարժուն վիճակի մէջի պէս . չունէր որոշ պահ՝ ո՛չ քնելու , ո՛չ ուտելու , ո՛չ կողմնելու , ո՛չ յառաջելու , այլ երբ ու ինչպէս որ կը թելադրէին իրեն իր անաղջ զգայարանքը կարիքն ու ապրեցութիւնը մայր բնութեան ... Ինք բանեղէն բերթուած ու բերթող մը , նախահսկայ զուարթուն , որ կ'ապրէր ու կ'երգէր բովանդակ տիեզերքը Բարբառ-Բնութեա՛ր . աւա՛ղ , իր կորած բաստին :

Բ. Ինչ որ այլք կը խօսին քու ինչութեանդ վրայ՝ ուր ան չեմ , այլ պէտք է մինչև աստիճան մը համարիս ինքզինքդ այնպէս՝ խնայարհութեան և խաղաղութեան համար . ինչ որ դուռն կը համարիս ինքզինքդ՝ դու ան ալ չես . այլ քու անձնադրես կրթդ է՝ որ շատ մասերով գեթ թեզի այնպէս կը ցուցնէ եթէ ոչ թերատեսութիւնդ . ինչ որ ճշմարտութիւնն և գործերուդ յաւիտենական արդիւնքը կը դիտեն ու կը սահմանեն քեզ յաւիտենապէս՝ դու ան իսկ ես . երանի՛ք թեզի՛ եթէ կրցար փրկստիպարէն այ՛դ դիտելիս սրբաբոլ զթեզ :

Գ. Կրծներուս արտայայտիչ ձեւերն ու աստուածաբանութիւնները բուն իբր ետութիւնները